

բախտութիւն չըջակայ ժողովրդեան, որոնց նա տալիս էր քահանայացուներ, վարժապետներ և քիչ շատ գրեւ-կարդալ գիտեցողներ: Այս տարի այդ դպրոցը աւարտել են 10 հոգի: Պատրիարքարանը դադարեցրել է նպաստ տալը և միաբանութիւնը անձեռնհաս է շարունակելու որբանոցի գոյութիւնը, որովհետև վիճակային և ուխաւորական նուէրներն ու հասոյթները իսպառ դադրած են, վանքը ճնշոււմ է պարտքի տակ, որ աճոււմ է մեծ տոկոսների շնորհիւ: Ի՞նչ պիտի լինի հետևանքը՝ հեշտ է գուշակել: Մի օր վարժարանը կփակուի, միւս օր այս կամ այն շէնքը կփլի, մի օր էլ ոչխարն ու տաւարը կվաճառուի և ամենից վերջ... կցրուի Միաբանութիւնը:

ՃԻՐՎԱՆՋԱԴԷԻ ԵՐԿԵՐԻ ԲՈՋԵՄԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մօրավիայի Նիկոլաի քաղաքից երէց Ալօիս Կուդէլկան մեզ հաղորդում է, որ ինքը արդէն թարգմանել է հայերէնից բոհեմերէն լեզուի մեր աշխատակից պ. Շիրվանզադէի «Նամուս» վէպը և «Հաւատարիմ ընկերներ» պատկերը, որ այս տարի տպուած էր «Լոււմայ»-ի մէջ և արդէն ուղարկուած են մի հրատարակչի տպագրութեան համար: Հ. Կուդէլկան խնդրել է մեզնից ուղարկել իրան նոյն հեղինակի «Կրակ» անունով վէպը, որ նոյնպէս մտադիր է թարգմանել բոհեմերէնի: